«ԵՐԵՎԱՆԻ ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք.Երևան 0046, Բագրատունյաց 44, Հեռախոս 011 51 49 92, էլ.փոստ՝ eltransport@yerevan.am

№ 456 14 հունիսի 2026թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

«ԱԳ ՅՈՒՆԻՈՆ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

«Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ԱԳ Յունիոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝Վաճառող) միջև 2026թ. ապրիլի 21-ին կնքվել է ապրանքի մատակարարման № ԵԷՏ-ԳՀԱՊՁԲ-26/15-1 ծածկագրով պայմանագիր (այնուհետև՝ Պայմանագիր) համաձայն որի՝ Վաճառողը ստանձնել է 1-ին չափաբաժնով՝ 1 040 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի թվով 30 հատ կցորդիչների մատակարարման պարտավորություն՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված № 1 սահմանված տեխնիկական բնութագրի և մատակարարման ժամանակացույցի պահանջներին:

Պայմանգրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանգրի 2.4.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով.

Պայմանգրի № 1 հավելվածով՝ սահմանված մատակարարման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված գնորդի գրավոր կամ բանավոր պահանջի դեպքում՝ մատակարարումը 21 օրացուցային օրվա ընթացքում՝ № 1 համաձայնագիրը կնքվել է 2026թ. մայիսի 18-ին:

2026 թվականի հունիսի 11-ին էլեկտրոնային փոստի միջոցով «ԱԳ Յունիոն» ՍՊԸ-ին տեղեկացվել է պայմանագրով նախատեսված ապրանքը սահմանված քանակով և

պայմանագրով նախատեսված ժամկետում մատակարարելու անհրաժեշտության մասին: Սակայն Վաճառողը չի կատարել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները և չի մատակարարել պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 30 (երեսուն) հատ կցորդիչները՝ 1 040 000 (մեկ միլիոն քառասուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Հեռախոսազրույցի ընթացքում վերջինս հայտնել է, որ կազմակերպությունում առաջացել են խնդիրներ, ինչի հետևանքով ներկայումս չի կարող հստակ նշել վերոնշյալ ապրանքի մատակարարման ժամկետը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝**մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, **որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրով և որակավորման ապահովման գումարը:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, որ եթե «Երևանի Էլեկտրատրանսպորտ» ՓԲ ընկերության կողմից վճարման ենթակա գումարները պայմանագրի և որակավորման ապահովում՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի և 225 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամի չափով փոխանցվեն Գնորդի բանկային հաշվին՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, 1150008870220100 հաշվեհամարին, ապա «ԱԳ Յունիոն» ՍՊԸ-ի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետով և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ համապատասխան գործողություններ:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ **Ս.ԲԵՋԱՆՅԱՆ**